Քրիստոնյա Հայաստան
2002թ.
թիվ 1(117)-24(140)

# ԳԵՂԱՐԴ

*Սկիզբը՝ էջ 4*

Ընդերքում հարստություն թաքցնող այս ժայռի երկայնքով ձգվող արտաքին թեք սանդուղքը տանում է երկրորդ հարկ՝ դեպի ստորգետնյա ուրիշ կառույցներ: Դրանց կառուցմանը ձեռնամուխ է եղել իշխան Պռոշի որդի Պապաքը՝ իր կնոջ՝ Ռուզուքանի հետ:

1288 թվականին ժայռի մեջ՝ վերեւում, հատելով միջանցք բացվեց: Ինչպես եկեղեցու, այնպես էլ այս գավիթի միաքար պատին փորագրված են տարբեր քանդակներ եւ խաչքարեր: Արհեստական մուտքն ավարտվում է մեծ ուղղանկյուն դահլիճով, որի մեջտեղում բուն ապարից քանդակված են կենտրոնակազմ հորինվածքով իրար հետ կամարներով կապված չորս անջատ սյուները: Ինչպես ավանդական գավիթներում, այստեղ նույնպես կենտրոնում լուսային բացվածքով գմբեթն է վեր խոյանում: Ի դեպ՝ գմբեթակիր քառակուսուց թմբուկի կողին անցնելն իրականացվում է առագաստների միջոցով: Սյուներից մեկի վրա թողած գրությունը վկայում է, որ ժայռափոր վանքը կառուցվել է 1288 թվականին, իսկ վերին հարկը ստեղծվել է երկու տարում:

Ինչպիսի՜ վիթխարի աշխատանք են այստեղ կատարել հորատող-քարտաշները: Արդյոք նրանց մասին չե՞ն պատմում ժողովրդական հեքիաթում՝ հիշատակելով ուժեղ եւ անվեհեր Տորք Անգեղի անունը: Իսկ ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության»՝ Տորքը ձեռքով որձաքար ապառաժներ է ճեղքել, եղունգներով տաշել, դարձրել տախտակներ եւ դարձյալ եղունգներով դրանց վրա արծիվներ քանդակել: Սակայն մեկ ուժն այստեղ ի՞նչ կաներ... Ճարտարապետները կարողացել են չափազանց հմուտ կերպով օգտագործել բնական պայմանները՝ շրջապատող միջավայրի հետ հասնելով միասնության եւ միաձուլության:

Հայոց հողը հաճախակի ցնցող օտարերկրյա ասպատակությունների տարիներին Գեղարդը դառնում էր ամրոց՝ բոլոր կողմերից պաշտպանվելով Գեղամա լեռներով: Բազմաթիվ անձավային խուցերի եւ մատուռների մենության մեջ ոչ միայն պատսպարվել են դաժան փորձությունների տարիներին, այլեւ այստեղ հանգրվանել են տաղերգուներն ու գիտնականները: Ժայռափոր կացարաններից մեկում ապրել ու ստեղծագործել է XIII դարի նշանավոր պատմաբան Մխիթար Այրիվանեցին: Բայց Գեղարդի պատմության լավագույն էջը դրոշմված է քարի վրա: Անցած յոթ հարյուր տարիների ընթացքում Հայաստանի շատ քաղաքներ ու ավաններ են կործանվել, թշնամու զորքերի կողմից ջնջվել երկրի երեսից, բայց Գեղարդը մնացել է անսասան: Ահա արդեն յոթ դար է, ինչ Գեղարդը կանգուն է՝ որպես բնության նկատմամբ մարդու մեծագույն հաղթանակի խորհրդանիշ, որպես հայ ժողովրդի հավասի, ստեղծագործ տաղանդի, մտքի եւ ուժի մարմնացում:

*Ռաֆայել ԱՎԵՏԻՍՅԱՆ*



# ԵՐԱՆԻՆԵՐ

## ԸՍՏ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՑՈՒ

### ՔԱՐՈԶ Ա

Հիսուս Քրիստոսը, տեսնելով ժողովրդի բազմությունը, բարձրացավ լեռան վրա: Եվ երբ այնտեղ նստեց, Նրա մոտ եկան Իր աշակերտները, եւ Նա սկսեց նրանց ուսուցանել ու ասել. «Երանի՜ հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայությունը»:

Ներկա գտնվողներից ո՞վ է Խոսքի աշակերտը, որ ի զորու է գածրից՝ ունայն եւ անարգ մտքերից Նրա հետ բարձրանալ վսեմագույն խոկումի հոգեւոր լեռը: Այս լեռան կողին աննշմարելի են չարի բլուրների նետած ստվերները, որովհետեւ բոլոր կողմերից այն լուսավորված է ճշմարիտ լույսի ճառագայթներով: Լեռան գագաթից տեսանելի է այն ամենը, ինչն անտեսանելի է քարայրում (այստեղ, ինչպես Սբ.Գրիգոր Նյուսացու այլ գրվածքներում, ակնհայտորեն հիշատակվում է Պլատոնի քարայրը հայտնի այլաբանությունը) բանտվածների համար: Արդ, Աստծու Խոսքը, Ով երանելի է անվանում Իր հետ բարձրացածներին, մատնացույց է անում այն, ինչ տեսանելի է բարձունքից՝ Աստծու արքայություն, երկնային երկրի ժառանգություն, ողորմություն, արդարություն, մխիթարություն, ողջ արարչության Աստծու հետ հաղորդակցություն եւ հալածանքի արգասիքը, այն է՝ Աստծու հետ բարեկամություն: Խոսքը ցույց է տալիս լեռան գագաթից, որպեսզի հույսը մարդուն տեսանելի լինի բարձրից:

«Եկե՛ք ելնենք Տիրոջ լեռը»,-կանչում է Եսային (Ես. 2. 3): Եթե տկարացել ենք մեղքի պատճառով, թող մեր լքված ձեռքերն ու տկարացած ծնկներն ուժ առնեն, ինչպես հորդորում է մարգարեն (տե՛ս Ես. 35. 3): Երբ հասնենք լեռան գագաթին, կգտնենք Նրան, Ով բուժում է հիվանդությունն ու տկարությունը, Ով վերցնում է մեր մեղքերը եւ կրում մեր ցավերը (տե՛ս Ես. 53. 4): Ուրեմն բարձրանանք, որպեսզի Եսայու հետ հաստատվենք հույսի գագաթնակետին եւ այնտեղից տեսնենք այն, ինչ Խոսքը ցույց է տալիս Իրեն՝ դեպի բարձունքները հետեւողներին: Թող Խոսքը Իր բերանը բանա նաեւ մեզ համար եւ սովորեցնի այն, ինչը լսելն արդեն իսկ երանություն է: Թող Նրա խոսքերի սկիզբը մեր ներհայեցողության ելակետը դառնա:

«Երանի՜ հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայությունը»,-ասում է Նա: Պատկերացրեք՝ մի ժլատ մարդ պատահաբար ձեռք է բերում մի փաստաթուղթ, որտեղ ասվում է, թե այսինչ վայրում գանձ է պահված: Այդ գանձին հասնելու համար շատ ջանք ու տառապանք է հարկավոր: Ի՞նչ եք կարծում, մի՞թե այդ դժվարությունները պետք է վհատեցնեն նրան: Մի՞թե հոգնություն չունենալն առավել ցանկալի է, քան հարստությունը: Իհարկե ոչ: Նա պատրաստ է կանչել իր բոլոր ընկերներին, որպեսզի աջակցեն այդ գործում, բոլոր նրանց, ում հնարավոր է, որպեսզի կարողանա ձեռք բերել թաքնված գանձը: Եղբայրնե՛ր, սա այն գանձն է, որի մասին հայտնում է փաստաթուղթը, սակայն ճշմարիտ գանձը անհայտության մեջ է քողարկված: Ուրեմն մենք, որ փափագում ենք ձեռք բերել անարատ ոսկին, եկեք միավորենք բյուրավոր ձեռքեր՝ մեր աղոթքները, որպեսզի գտնվի այդ գանձը եւ բոլորին բաժանվի հավասարապես ու ամբողջական: Չէ՞ որ առաքինությունը բաշխվում է բոլոր նրանց, ովքեր փափագն ունեն հասնելու նրան՝ միաժամանակ ամբողջապես եւ աննվազ ներկա լինելով յուրաքանչյուրի



մեջ: Հոգեւոր հարստությունը նման է արեւի, որ ծագում է բոլորի վրա եւ երբեք չի նվազում: Եվ քանի որ յուրաքանչյուրը նույն հատուցումն է ակնկալում իր տքնանքի դիմաց, ուրեմն աղոթքով միանանք, որպեսզի ձեռք բերենք մեր փափագածը:

Նախ փորձենք պատկերացնել, թե ինչ է երանությունը: Երանությունը բարու ամբողջությունն է: Սա թերեւս ավելի պարզ կդառնա, եթե «երանություն» հասկացությունը զննենք իրեն հականիշ «թշվառություն» հասկացության կողքին: Թշվառություն նշանակում է ակամայից բռնված լինել ծանր տառապանքներով: Սրանցից յուրաքանչյուրը տրամագծորեն հակառակ է մյուսին: Բնական է, որ նա, ով կոչվում է երանելի, լիովին վայելում է իրեն ընծայված բարիքները, մինչդեռ թշվառական կոչվածին բաժին են ընկնում ցավագին հեծեծանքները: Ճշմարիտ երանելին աստվածայինն է: Ինչ որ հասկանում ենք այդ ասելով, երանություն է, անաղարտ կյանքը, անճառելի եւ անիմանալի բարին, աննկարելի գեղեցիկը՝ շնորհը, իմաստությունը եւ զորությունը, ճշմարիտ լույսը, որ ամեն բարու աղբյուրն է եւ ամենից զորավոր է, միակ ըղձալին, որ անփոփոխելի է եւ հավետ հաստատված անսահման բերկրանքի մեջ: Եթե նույնիսկ որեւէ մեկը Աստվածության մասին ասել է այն ամենը, ինչ հնարավոր է, միեւնույն է, Նրան արժանի ոչինչ դեռ չի ասել: Եթե նույնիսկ շարունակենք ավելի վեհ խոհեր ունենալ Աստվածության շուրջ, միեւնույն է, Նա անճառելի է: Մարդկային միտքը չի կարող հասնել Նրան, որ է:

Քանի որ Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով, ուրեմն այդ անունով կոչվածը նույնպես կարող է երանելի լինել, եթե հաղորդակից է ճշմարիտ երանությանը: Ինչպես արտաքին գեղեցկության բուն արտահայտությունը նախ կենդանի դեմքի մեջ է, ապա՝ նկարում պատկերված արտացոլանքի մեջ, նույնպես եւ մարդկային բնությունը, որ անդրանցական երանության պատկերն է, երանելի հատկանիշներն արտացոլելով՝ օծվում է բարու գեղեցկությամբ: Բայց քանի որ մեղքի աղտը խաթարեց պատկերի գեղեցկությունը, Նա եկավ, որպեսզի մեզ լվա Իր ջրով, կենդանի ջրով, որի ակունքը հավիտենական կյանքն է: Արդ, երբ ազատվենք մեղքի նախատինքից, դարձյալ կհաստատվենք երանելի կերպի մեջ:

Հմուտ նկարիչն անտեղյակ մարդուն կարող է ասել, որ գեղեցիկ դեմք ստեղծելու համար հարկավոր են արտաքին որոշ առանձնահատկություններ՝ այսպիսի մազեր, աչքեր, հոնքեր, այտեր, մի խոսքով՝ ամեն մի բարեմասնություն, որով գեղեցկությունը դառնում է կատարյալ: Իսկ Նա, Ով Միակ Երանելիի նմանությամբ մեր հոգիներն է կերտում, բառերով է հայտնում այն ամենը, ինչը երանություն է ծնում. «Երանի՜ հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայությունը»:

Սակայն ի՞նչ օգուտ կունենանք այս առատաբաշխությունից, եթե չհասկանանք ասվածի իմաստը: Բժշկագիտության մեջ նույնպես շատ կան թանկարժեք եւ սքանչելիորեն հայտնաբերված դեղեր՝ անծանոթ շատերին, որոնք անպիտան են այնքան ժամանակ, քանի դեռ չեն իմացել դրանց օգտագործման եղանակը:

*Շարունակելի*

*Պատրաստեց Հասմիկ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ*

# ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՃԱՇՈՑ ԳՐՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում հաստատված կարգով՝ ամեն օր ժամերգությունների, տոնական եւ կիրակի օրերին մատուցվող ս. պատարագի ընթացքում դպիրը, սարկավագը եւ քահանան Ս. Գրքից հատվածներ՝ ընթերցվածքներ են կարդում: Սուրբգրային հատվածներ ընթերցելու կարգը սկզբնավորվել է Իսրայելում հնագույն ժամանակներից: Հիսուսն Իր առաքելության ընթացքում ժողովարանում ներկաների համար կարդաց եւ մեկնեց Ս. Գրքից մի հատված (տե՛ս Ղուկ. Դ 16-21):

Քրիստոնեության տարածումից հետո սուրբգրային ընթերցումները Եկեղեցու ընդհանրական աստվածպաշտության անքակտելի մասը դարձան, ինչը ժողովրդին «վարդապետությամբ խրատելու եւ բարին հորդորելու համար է, նաեւ՝ նախագուշակ եւ վկա Տիրոջ տնօրինության» (Հովհաննես Արճիշեցի, «Մեկնություն պատարագի», 1999, էջ 47): Առաքելական Ը կանոնում կարդում ենք. «Առաքյալները կարգեցին եւ հաստատեցին, որ Եկեղեցում ընթերցվեն Գրքերը. Հին Կտակարանը՝ Օրենքը եւ Մարգարեները, եւ Նոր Կտակարանը (որոնք լինեն մեր Փրկչի չարչարանքների մասին), ավետարանիչների գործն ու խոսքը [ճշմարիտ Բանի] եւ Փրկչի աշակերտների վարդապետության մասին: Սրանից ավելին թող չընթերցվի բեմից»:

Սուրբգրային այս ընթերցվածքները նախկինում կարդացվում էին Ճաշու ժամերգության ընթացքում, այդ պատճառով էլ ընթերցվածքների այս ժողովածուն կոչվեց Ճաշոց գիրք կամ պարզապես Ճաշոց: Բացի Ճաշոցից, կազմվեցին նաեւ այլ գրքեր՝ Աւետի, Յուղաբերի, Ճաշու Ավետարաններ: Ճաշոցի ընթերցվածքների հերթականությունը ներկայացված է հետեւյալ եռակարգությամբ՝ Հին Կտակարան, Առաքյալների թղթեր, ապա՝ Ավետարան: Այս հերթականությունը խորհուրդ ունի: Ս. Գր. Տաթեւացին այսպես է մեկնում այդ կարգը. «Ասենք, որ մարգարեները, իբրեւ կանխատեսներ, նախապես պատմեցին Բանի մարդեղության եւ մարդկանց փրկության մասին, իսկ առաքյալները, իբրեւ ականատեսներ, վկայեցին: Իսկ կանխասելը նախորդում է վկայելուն:

Դարձյալ՝ մարգարեները՝ հեռվից, իսկ առաքյալները մոտիկից տեսան մարմնացած Բանին: Այդ իսկ պատճառով փոխում ենք տեղերը՝ մարգարեներից կարդում ենք Եկեղեցու մեջ, իսկ առաքյալներից՝ բեմի մոտ:

*Շարունակությունը՝ էջ 8*

